սեանց վասն նուիրաբերելոյ յօգուտ եկ. ծխ. դպրոցին Մեծ Արխավալի գեղջ ի տարին զ10 ռ.։ Նոյեմբ. 13. Թ. 584.

Հայրապետական Պարգեւ.

Կոնդակ յանուն Ներսէս քահանայի Ղոնչէկուլեան Տօպրիչ քաղաքի Բուլղարիոյ, որով շնորհեցաւ իրաւունք կրելոյ ի կուրծս զքահանայական լանջախաչ ի տրիտուր ջանիցն վասն պահպանութեան վարժարանի քաղաքին և նորոգութեան եկեղեցւոյն։ Նոյեմբ. 22. Թ. 589.

ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ

Նոյեմբ. 2-ին. Սինոդը լսեց եզեկիա Աբովեանի և և Ցովհաննէս Խօջաէյնաթեանի խնդիրները, որով նրանք խնդրում էին նշանակել իրանց կառավարիչ Մարցայ անտառին և որոշեց՝ մերժել նրանց խնդիրը, որովհետև նրանք անտառապահութեան գործին մասնագէտ չեն։ Թ. 662.

— Նոյն օրը Սինոդը, լսելով Ստեփան սարկաւագ Մելիքեանի խնդիրը կուսակրօն հոգևորականութիւնից արձակելու մասին, որոշեց՝ ի նկատի ունենալով, որ Ստեփան (Նոյն և Սպիրիդոն) սարկաւագ Մելիքեանը բարձրագոյն կրթութիւն ստանալու նպատակով ստացել է 2875 ռ. նպաստ, որը նա չի կամենում վերադարձնել, նախ՝ պատուիրել Վրաստանի թեմի Առաջնորդին, որ արուի պատշաճ կարգադրութիւն, որպէս զի Ստեփան սարկաւագն կուսակրօն հոգևորականին պատշաճ զգեստ կրի և երկրորդ՝ բառնալ իւրաքանչիւր ամիս նրա ռոճկի 1/5 մասը մինչև 2875 ռ. նպաստի լրանալը և երրորդ՝ յայտնել նորան, որ իր հոգևոր կոչումից ազատելու խնդիրը կը լուծուի միայն այն ժամանակ, երբ կստացուի նրան տուած ամբողջ նպաստի գումարը։

— Նոյն օրը Սինոդը, լսելով Վեհափառ Կաթուղիկոսի թ. 208 կոնդակը, որով առաջադրուում էր Սինոդին շուտով պատրաստել տալ պատշաճ տապանաքար Հանգուցեալ Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի գերեզմանի համար, որոշեց՝ առաջադրել Վրաստանի թեմի առաջնորդին պատրաստել տալ մի հմուտ արհեստաւորի ձեռքով սպիտակ մարմարեայ տապանաքար հանգուցեալ կաթուղիկոսի գերեզմանի համար, փոխադրելով վերան հեռուեալ մակագրութիւնը. «Մկրտիչ Ա. Կաթուղիկոս ամենայն Հայոց, Վանեցի—Խրիմեան Հայրիկ—նուագող վշտից հայրենեաց Հայոց, ծնեալ ի 4 ապրիլի 1820 և վախճանեալ ի 29 հոկտ. 1907 ամի». Թ. 672.

— 4-ին Սինոդը, լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի յայտարարութիւնը Ճալէթի վանքի կալուածի կառավարութիւնը և նրանից ստացած արդիւնքը Նուխուոյ և Ճալէթի ծխական դպրոցների հոգաբարձութիւններին յատկացնելու մասին, որոշեց՝ յայտնել Ղարաբաղի թեմի Առաջնորդին, որ նա իրաւունք չունի իւրովի տնօրինելու Ճալեթու վանքի կալուածի վիճակը, ուստի և առաջադրել Ղարաբաղի Կոնսիստորիային կառավարել Ճալէթի վանքի կալուածը առանձին կառավարչի ձեռքով մինչև Սինոդի նոր կարգադրութիւնը. Թ. 681.

— Նոյն օրը Սինոդը, լսելով Վեհափառ Հայրապետի առաջարկութիւնը, համաձայն ներքին գործոց Նախարարի սոյն տարուայ 17|X թ. 7129, գրութեան, պատերազմում ընկած և վնասուած զինուորների և նրանց ընտանիքների օգտին մեր եկեղեցիներում գանձանակ շրջեցնելու մասին, որոշեց՝ պատուիրել Ռուսաստանի բոլոր թեմերի առաջնորդներին կարգադրել, որ թեմի բոլոր եկեղեցիներում մեծ պասի առաջին երեք կիրակիներին գանձանակ շրջեցնեն պատերազմում վնասուածների և նրանց ընտանիքների օգտին և հանգանակած գումարը ներկայացնեն Սինոդիս. Թ. 676.

— 9-ին. Սինոդը լսելով Նոր-Նախիջևանի և Բեսա-

բաբիոյ թեմի Առաջնորդի յայտարարութիւնը, որով հրահանգութիւն էր խնդրում հրէաներին Հայաստանեայց եկեղեցու ծոցը ընդունելու առթիւ, որոշեց, պատուիրել Հայոց բոլոր կոնսիստորիաներին, որ հրէաների՝ Հայաստանեայց եկեղեցու ծոցը մտնելու համար յարուցած խնդիրները լուծեն Օր. ժող. XI հ. I մ. յոդ. 7 և նորա յաւելուածի ճիշտ մտքի համաձայն, յայտնելով Սինոդին ամեն անգամ իւրաքանչիւր մկրտուած հրէի մասին։ Թ. 693.

— Նոյն օրը Սինոդը, լսելով Վանական Կառավարութեան յայտարարութիւնը Օշականում գտնուած «եղիազար եպիսկոպոսի» կոչուած անտառը վարձով տալու մասին, որոշեց հաստատել աճրդախօսութիւնը և անտառը տալ կապալով Բագրատ Խաչատրեանին իններ տարի ժամանակով, տարեկան 521 ռուբլով։ Թ. 700.

— Նոյն օրը Սինոդը, լսելով Գեօկչիլիսայի վանապատկան կալուածը կապալով տալու գործը, որոշեց Գեօկչիլիսայի կալուածը կապալով տալ նախկին կապալառու Երևան քաղաքի բնակիչ Սարգիս Տէր-Գաբրիէլեանին երեք տարի ժամանակով, տարեկան 240 ռուբլով։ Թ. 701.

— Նոյն օրը Սինոդը, լսելով Ս. Թովմայի վանքին (Գողթն գաւառ.) մօտ գտնուած 5 կտոր հողերի վիճական գործը, որոշեց՝ պատուիրել Երևանի Կոնսիստորիային յայտնելու Ս. Թովմայի վանքի հոգաբարձութեանը, որ Սինոդը յիշեալ հողերը ճանաչում է որպէս սեպհականութիւն Ս. Թովմայի վանքի և ոչ «Բերդակ» կոչուած ուխտատեղւոյ, բացի մի կտոր «աւերակ» հողից, որը Սինոդը յատկացրել է Տանակերտ գիւղին այն պայմանով, որ նախ՝ նրանք հրաժարուեն սկսած վէճը շարունակելուց և ապա՝ որ երկու տարուայ ընթացքում այդ հողի վրայ դպրոցական շէնք կառուցանեն։ Թ. 704.

— 13-ին Սինոդը, լսելով Բագուայ ծխական հոգաբարձութեան խնդիրը Ս. Լուսաւորիչ եկեղեցու գումարներից դարձեալ 13,000 ռ. փոխառութիւն անելու մա-

սին, որոշեց՝ նախ՝ որ հոգաբարձութիւնը, փոխարքայի հաստատ. ժամ. կանոն. Ա. գլ. 6. յօդ. համաձայն իրաւունք չունէր առանց հոգևոր բարձր իշխանութեան հաստատութեան 14,000 ռ. փոխառութիւն անելու Ս. Լուսաւորիչ եկեղեցու արժէթղթերով, երկրորդ՝ ապօրինի, համարելով այդ փոխառութիւնը, պահանջել հոգաբարձութիւնից ըստ կարելւոյն շուտով լրացնել փոխ առեալ 14,000 ռ. գումարը, երրորդ՝ յայտնել հոգաբարձութեանը, որ Սինոդը թոյլ չի տալիս նոր փոխառութիւն անելու Ս. Լուսաւորիչ եկեղեցու արժէթղթերից և չորրորդ՝ բացատրել հոգաբարձութեանը, որ գերեզմանատան բարեկարգ պահպանութիւնը բարեպաշտ ծխականների պարտքն է հոգալ իրենց կամաւոր տուրքերով և ոչ եկեղեցիների դրամագլուխներին ձեռնամուխ լինելով։ Թ. 623.

— Նոյն օրը Սինոդը, լսելով Երևանի. էջմիածնական կրպակների աճրդախօսութեան գործը, որոշեց՝ ի նկատի ունենալով Մայր-Աթոռի շահերը, նշանակել նոր աճուրդ և աճրդախօսութիւնը սկսել 670 ռուբլուց։ Թ. 724.

— 25-ին Սինոդը, լսելով ազգիս Վեհափառ Հայրապետի Թ. 31 կոնդակը, որոշեց՝ Բառնաբաս վարդապետին Զանգեզուայ վանքի վանահայր նշանակելու համար խնդրել Երևանի Նահանգապետի հաճութիւնը և ապա խնդրել նորին Սրբութիւն Վեհափառ Կաթուղիկոսից տնօրինել կարգելու մէկին վանահայր Երնջակի Ս. Կարապետ վանքի։ Թ. 740.

— Նոյն օրը Սինոդը, լսելով հանգուցեալ Աղէքսանդր Տէր-Ցարութիւնեանի կոտակի գործը, որոշեց՝ պատուիրել Ղարսի Հոգևոր կառավարութեանը հատուցանել Լիւբլինի պետական պալատին 360 ռ. ժառանգական տուրքը՝ կտակով Նատալիա Տիգրանեանին հասանելիք գումարի հաշուից։ Թ. 755.